




ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ
АНУШАВАН ЗАКАРЯН

**ԻԼՅԱ ԷՐԵՆԲՈՒՐԳԻ
ԹԻՖԼԻՍՅԱՆ ՕՐԵՐԸ**



**ТИФЛИССКИЕ ДНИ
ИЛЬИ ЭРЕНБУРГА**





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АНУШАВАН ЗАКАРЯН

ТИФЛИССКИЕ ДНИ
ИЛЬИ ЭРЕНБУРГА

ЕРЕВАН
АВТОРСКОЕ ИЗДАНИЕ
2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆԿ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հարգարժեք շքանշան
Մարտիրոսյանի մեթոդական
կամ ֆուրքանդեի համար:

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

26.06.2013թ.

Ք II
659384

ԻԼՅԱ ԷՐԵՆԲՈՒՐԳԻ
ԹԻՖԼԻՍՅԱՆ ՕՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2012



УДК 821.161.0
ББК 83.3Р
3-183

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Չաքարյան Անուշավան
3 -183 Իլյա Էրենբուրգի թիֆլիսյան օրերը / Ան. Չաքարյան.— Եր.: Հեղինակային հրատարակություն, 2012.— 52 էջ:

1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ռուս հայտնի գրող և հրապարակախոս Իլյա Էրենբուրգը (1891–1967) հյուրընկալվել է Թիֆլիսում: Գրքույկում ներկայացված է այդ օրերին նրա գրական-հասարակական գործունեությունը: Ելախատեսված է ընթերցող լայն հանրության համար:

ПЕЧАТАЕТСЯ
ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА
ИНСТИТУТА ЛИТЕРАТУРЫ
ИМ. М. АБЕГЯНА НАН РА

Закарян Анушаван
3-183 Тифлиссские дни Ильи Эренбурга / Ан. Закарян. –
Եր.: Авторское издание, 2012. – 52 с.

В сентябре-октябре 1920 г. известный русский писатель и публицист Илья Эренбург (1891–1967) гостил в Тифлисе. В книжке представлена его литературно-общественная деятельность в эти дни.

Предназначена для широкого круга читателей.

УДК 821.161.0
ББК 83.3Р

ISBN 978-9939-0-0548-5

© Չաքարյան Ան., 2012
© Закарян Ан., 2012

1. ԻԼՅԱ ԷՐԵՆԲՈՒՐԳԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ռուս նշանավոր գրող և հրապարակախոս Իլյա Էրենբուրգը 1920 թ. սեպտեմբերի վերջերին, Թեոդոսիայից Մոսկվա հասնելու փոխարեն, փորձությունների բերումով կնոջ հետ հայտնվում է Թիֆլիսում: Անծանոթ քաղաքում առաջին օրն իսկ հանդիպում է բանաստեղծ Օսիպ Մանդելշտամին: Վերջինիս, վրաց բանաստեղծներ Պաոլո Յաշվիլու և Տիցիան Տաբիձեի հետ անցկացրած օրերի մասին Էրենբուրգը հիշարժան էջեր է թողել իր ինքնակենսագրական-հուշագրական «Մարդիկ, տարիներ, կյանք» գրքում: «Երբ ականատեսները լռում են, ծնվում են լեզենդներ»¹, – գրողի այս իմաստուն տողերը, իրավամբ, կարելի է համարել գրքի բնաբանը:

Պատմելով, որ անսպասելի հանդիպումը մեծ ուրախություն է պատճառել և իրեն, և՛ Մանդելշտամին, որը, ինչպես նկատում է Ի. Էրենբուրգը, ընդամենը մի երկու օր լինելով Թիֆլիսում «... ոտքերի տակ հող ուներ ... գործարար ասաց. «Հիմա մենք կգնանք Տիցիան Տաբիձեի մոտ, և նա մեզ կտանի հիանալի պանդոկ...»²: Տ. Տաբիձեն խանդավառ դիմավորում է նրանց, ապա գտնելով Պ. Յաշվիլուն՝ հյուրասիրում են բանաստեղծ հյուրերին, տեղավորում հյուրանոցում: «Մենք թբիլիսիում ապրեցինք երկու շաբաթ. այդ օրերն ինձ թվացին քնարական նահանջի օրեր...

Մինչ այդ ես երբեք չէի եղել Արևելքում, և հին թբիլիսին ինձ թվաց «Հազար ու մեկ գիշերների» քաղաքներից: Մենք շրջում էինք անծայր Մեյդա-

¹ И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2. М., 1961, с. 7.

² Նույն տեղում, էջ 508:

նով... եղանք ծծմբային բաղնիքներում... Վերայի այգիներում գինի էինք խմում... Հին տաճարներում դիտում էինք քարե թագուհիներին, որոնց շոյում էին հովազները:...»: «Ինձ նվիրեցին «Թիֆլիսի բանաստեղծների համքարության ժողովածուն» («Ակմե» խորագրով.– *ԱՆ. Զ.*),– վերհիշում է Էրենբուրգը:– Այդ գրքույկը պատահաբար ինձ մոտ պահպանվել է: Հեղինակների թվում շատ են պոետական ազգանուններով բանաստեղծուհիները. Նինա Գրացիանսկայա, Բել-Կոն-Լյուբոմիրսկայա, Մագդալինա դե-Կապրելե-վիչ: «Թիֆլիսի համքարության» բանաստեղծները գրում են սոնետներ Սվարոգի, Էրոսի, Սուլամիթի, Սանավալլատի, Մոնֆորի և նրանց նույնքան մոտ մյուս գործող անձանց մասին»³:

«...1920 թ. աշնանը... վրացի ընկերները մեզ պատան տվեցին, ջերմացրին: ... Յաշվիլին ու Տաբիձեն Ռազմավիրական ճանապարհով մեզ ճանապարհեցին մինչև առաջին կայանը...»⁴, – թիֆլիսյան օրերի վերաբերյալ ասելիքն ամփոփում է Էրենբուրգը՝ առանց մտաբերելու իր և Մանդելշտամի պատվին կազմակերպված երեկոն, սեփական ուշագրավ հոդվածները մամուլում:

Գրական այդ երեկոն պետք է տեղի ունենար սեպտեմբերի 26-ին կոնսերվատորիայի դահլիճում: «Արդի ռուսական պոեզիան» խոսքով երեկոն բացելու էր բազմակողմանի իմացություններով և հռետորական փայլուն ձիրքով հռչակված վրաց անվանի գրական գործիչ Գ. Ռոբակիձեն: «Արվեստը և նոր դարաշրջանը» բանախոսությամբ և «Կրակ», «Նոր

³ Նույն տեղում, էջ 511–513: Այս գրքույկի մասին մանրամասն տե՛ս Ա. Ն. Զաքարյան. Деятельность тифлисского «Цеха поэтов». – «Историко-филологический журнал», 2011, № 2, с. 113–130; Ն. Ն. Երենբուրգի՝ Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акме». Ереван, 2011, с. 20–98.

⁴ И. Эренбург. Եշվ. աշխ., էջ 516 – 517:

արշալույսներ» գրքերից բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես էր գալու Ի. Էրենբուրգը, իր «Քար» գրքից բանաստեղծություններ էր կարդալու Օ. Մանդելշտամը: Վերջիններիս բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես էր գալու ռուս դերասան Ն. Ն. Խոդոտովը⁵, որը զգալի ժամանակով ապաստան էր գտել Թիֆլիսում և, ըստ Էրենբուրգի, այդ օրերին «հավաքվում էր դեպի տուն՝ Պետրոգրադ»⁶:

Դժբախտաբար, գրական այդ երեկոյի վերաբերյալ արձագանքներ չհաջողվեց գտնել⁷, դրա փոխարեն որոնումների արդյունքում հայտնաբերվեցին Ի.

⁵ «*Բանաստեղծներ Օ. Մանդելշտամի և Ի. Էրենբուրգի ժամանումը*: Դրիմից Թիֆլիս են եկել բանաստեղծներ Օ. Մանդելշտամը և Ի. Էրենբուրգը: Կիրակի օրը կոնսերվատորիայում կայանալու է նրանց միակ երեկոն: Ծրագիրը. 1) Գր. Ռոբակիձե – Խոսք ժամանակակից ռուսական պոեզիայի մասին, 2) Ի. Էրենբուրգ – զեկուցում՝ «Արվեստը և նոր դարաշրջանը» և բանաստեղծություններ «Կրակ» և «Նոր արշալույսներ» գրքերից, 3) Օ. Մանդելշտամ – բանաստեղծություններ «Քար» գրքից և նոր բանաստեղծություններ, 4) Ն. Ն. Խոդոտով – Օ. Մանդելշտամի և Ի. Էրենբուրգի բանաստեղծությունները: Երեկոն գրական մեծ հետաքրքրություն է ներկայացնում» [*«Слово»* (Тифлис), 1920, 24 сентября]: Ի դեպ, «Սլովո» թերթի սեպտեմբերի 26-ի հայտարարության մեջ Ի. Էրենբուրգի «Նոր արշալույսներ» գրքի վերնագիրը տպագրվել է՝ «Երկու Արշալույսներ»:

⁶ Տես И. Эренбург. Եզվ. աշխ., էջ 512:

⁷ Սովորաբար տեղի ունեցած միջոցառումների վերաբերյալ «Սլովո» թերթի հաջորդ համարում զետեղված է լինում տեղեկատվություն: Այս թերթի հաջորդ համարը լույս է տեսել սեպտեմբերի 28-ին: Ցավոք, Հայաստանի ազգային գրադարանում պահվող «Слово»-ի միակ հավաքածուի այդ համարի 2-րդ և 3-րդ էջերը տպագրական խոտան են՝ սպիտակ էջեր, որտեղ էլ, ըստ ամենայնի, այդ երեկոյի մասին պետք է լիներ համապատասխան տեղեկատվություն:

երենբուրգի ելույթները մամուլում, որոնք, անկասկած, ներկայացնում են գրապատմական հետաքրքրություն: Դրանք «Սլովո» թերթում «Ռուս բանաստեղծների դիմանկարներ» ընդհանուր խորագրով տպագրված ակնարկներն են Վ. Բրյուսովի, Կ. Բալմոնտի, Ա. Բլոկի և Վլ. Մայակովսկու մասին: «Սլովոյի» սեպտեմբերի 26-ի համարում տեղեկացվում էր, որ դրանցով սկսում է արդի ռուս բանաստեղծներին նվիրված դիմանկարների շարքի տպագրությունը, որոնք «գրել է այժմ մեզ մոտ հյուրընկալվող բանաստեղծ Ի. Էրենբուրգը», և սակայն, այդպիսիք այլևս չեն տպագրվել: Հասկանալի է, Էրենբուրգն արդեն մեկնել էր Թիֆլիսից⁸:

Հայտնի է, որ այդ ակնարկներն ուրիշ բանաստեղծների (Աննա Ախմատովա, Յուրգիս Բալտրուշայտիս, Անդրեյ Բելի, Մաքսիմիլիան Վոլոշին, Սերգեյ Եսենին, Վյաչեսլավ Իվանով, Օսիպ Մանդելշտամ, Բորիս Պաստերնակ, Ֆեոդոր Սոլոգուբ, Մարինա Ցվետաևա) դիմանկարների հետ՝ հավելումներով, կրճատումներով և լրամշակված տեսքով տեղ են գտել Ի. Էրենբուրգի «Ռուս բանաստեղծների դիմանկարներ» գրքում, որը հրատարակվել է 1922 թ. Բեռլինում: 1923 թ. այն «Ժամանակակից բանաստեղծների դիմանկարներ» վերնագրով լույս է տեսել մոսկովյան «Փերվինա» հրատարակչությունում: Այդ ժամանակներից գիրքը չի վերահրատարակվել

⁸ Թիֆլիսում Ի. Էրենբուրգի գործունեության մասին տես Ան. Ջաքարյան. Իյա Էրենբուրգը Թիֆլիսում (1920 թ.).- ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի «Երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների հանրապետական գիտական VII նստաշրջան, զեկուցումների դրույթներ. մայիսի 30 – հունիսի 1. 1984թ., Երևան, 1984, էջ 15–16, ն ու լ յ ն ի՝ Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920), Երևան, 1984, էջ 205–214, ն ու լ յ ն ի՝ Статьи Эренбурга о русских поэтах. – «Литературная Армения», 1989, № 8, с. 99 – 101.

մինչև 1999 թ., երբ Սանկտ Պետերբուրգում այն 500 տպաքանակով հրատարակեց «Նևա» ամսագիրը⁹:

Մենք այստեղ 1920 թ. Թիֆլիսում գրած և հետագայում՝ 1922, 1923, 1999 թթ., վերահրատարակված խնդրո առարկա բանաստեղծների մասին ակնարկների տեքստաբանական վերլուծություն չենք անելու, այլ միայն որոշ զուգահեռներ ենք անցկացնելու «Մարդիկ, տարիներ, կյանք» գրքում Վ. Բրյուսովին, Կ. Բալմոնտին, Ա. Բլոկին և Վլ. Մայակովսկուն տված Ի. Էրենբուրգի գնահատականների ու բնութագրերի հետ:

⁹ Стів И. Эренбург. Портреты современных поэтов. СПб., журнал «Нева», 1999 г. //http.magazines.russ.ru.

2. ՌՈՒՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Խնդրո առարկա ակնարկներից առաջին երկուսը պարունակում են համարյա նույնպիսի բնութագրումներ ու մտաբերումներ, որպիսիք գտնում ենք գրողի «Մարդիկ, տարիներ, կյանք» գրքի Վ. Բրյուսովին և Կ. Բալմոնտին վերաբերող էջերում: Երևում է, որ 1920-ական թվականներին հրատարակված ակնարկները գրողն ունեցել է ձեռքի տակ: Նույնն են մտաբերումները Բրյուսովի հետ իր հանդիպումից, «Պոետների սրճարանում» նրա ելույթից, համարյա նույնն է անգամ այն համեմատությունը, որով բնութագրվում է հանդիսավոր ու խստահայաց տերցիմներ արտասանող Բրյուսովը. «Այդ պահին նա նմանվում է անհնազանդների վրա մտրակ բարձրացնող սանձահարողի. կարծես բառերը առյուծներ էին»¹:

Եվ սակայն թե՛ Բրյուսովին, թե՛ Բալմոնտին (մանավանդ վերջինին) նվիրված այս ակնարկները գրված են նկատելիորեն խիստ արտահայտություններով և, կարելի է ասել, անգամ ունեն երգիծական շեշտեր՝ զգալիորեն մեղմացված տասնամյակներ հետո գրված գրքի էջերում: Մեղմացվել, հղկվել են ձեվակերպումները, ելակետերը. գնահատությունները հիմնականում մնացել են նույնը, բայց և կան նկատելի որոշ տարբերություններ, որոնցից ավելորդ չէր լինի հայ ընթերցողի համար վկայակոչել ուշագրավ մեկ-երկուսը:

Նկատի ունենալով ամեն ինչի ձեռք զարկելու Բրյուսովի սովորությունը՝ էրենբուրգը հողվածում գրում է, թե նրա մեջ Պետրոս Մեծին հիշեցնող ինչ-որ

¹ «Слово», 1920, 26 сентября. Зѣмлт. И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2, с. 365.

բան կա: Իր այդ սովորությամբ և զարմանալի աշխատասիրությամբ նա ստեղծել է «դասական և ազատ, պառնասյան և քաղաքացիական, դեկադենտական և բարոյախոսական բանաստեղծություններ, սոնետներ, տերցիններ, բալլադներ, տրիոլետներ, սեկստիններ, լե և այլն՝ Նեկրասովի կամ Մալարմեի, Վերհարնի կամ Իգոր Սևերյանիին ոճով: Գրում է նաև դրամաներ, պատմվածքներ, վիպակներ, վեպեր: Թարգմանում է հնագույն և նոր լեզուներից: Հանդես է գալիս փիլիսոփայի, գեղարվեստական քննադատի, զինվորական թղթակցի դերերով: Նրա անունով ստորագրված են ոչ մեկ տասնյակի հասնող գրքեր, իսկ նրա սեղանի տարողունակ արկղերը պահպանում են դեռևս չտպագրված ձեռագրերի կույտեր: Նա հոգնություն չունի, և նրա նման մարդկանց մասին չէր արդյո՞ք խորհրդածում Բլոկը՝ Ռուսիան համարելով «Նոր Ամերիկա»:

Ուշագրավ են և Բրյուսովի ստեղծագործության դատողականությանը վերաբերող հատվածները, որտեղ սառը, անհուզական դատողականությանը հակադրվում է բանաստեղծական երաժշտականությունը: Ի դեպ, ասվում է նաև, որ Բրյուսովն առհասարակ երաժշտություն չի սիրել:

Իր գրքում անդրադառնալով Բրյուսովի առնչությանը Ռենե Գիլին՝ երենբուրգը գրում է. «Վալերի Յակովլևիչը Ֆրանսիայում հայտնաբերեց ոչ շատերին հայտնի բանաստեղծ Ռենե Գիլին, «գիտական պոեզիայի» հայտնագործողին: Ռենե Գիլի դատողությունները Բրյուսովին դուր եկան. Վալերի Յակովլևիչը դեռ վաղուց էր ցանկանում լինել բարձրագույն կրթությամբ կախարդ, մոգ-ակադեմիկ»²: Ռենե Գիլից ժառանգած Բրյուսովի տեսությունը քննադատելիս՝ երենբուրգն այս վերջին տողերի փոխարեն հողվածում հեգնանքով գրում է. «Օ՛, իհարկե, սոխակը

² И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2, с. 366.

շատ գեղեցիկ է երգում, բայց, կարծես, ապագան պատկանում է սարսափելի գրամաֆոնին... թերևս մեր երեխաները՝ իրենց նոր լսողությամբ, պետք է զմայլվեն մեքենաների դրոշմումով...», և նման այլ տարբերություններ:

Ինչպես ասվեց, հողվածում ավելի խիստ են Կ. Բալմոնտին տված Ի. Էրենբուրգի բնութագրերը, և այս դեպքում նա ինչ-որ ավելի է անխնա: Նշանակետ դարձնելով Բալմոնտի «արքայական» կեցվածքը՝ նախ նկարագրում է նրա արտաքինը: «Բալմոնտի մեջ արքայական վեհություն կա, — գրում է Էրենբուրգը: — Նա ծիրանագույն թիկնոց չի կրում, այլ՝ հասարակ պիջակ, բայց մազերի նարնջագույն ալիքները բոցերով պսակում են նրա մեծամտորեն ձգված գլուխը: Խոր սպիագիծը խորհրդավոր կերպով շուլալում է նրա չափից ավելի մեծ ճակատը: Կարմրապղնձագույն դեմքին՝ կանաչ աչքեր: Նա ոտքը չի դնում, չի էլ քայլում, նրա թռչնային ոտքերը կարծես չեն ուզում դիպչել հողին: Նրա ձայնը նման է ոչ այն է խլթխլթոցի, ոչ այն է ծլվլոցի... Լսելով նրա ականջ ծակող ձայնը՝ նույնիսկ թշնամիները երեսնիվայր փռվում են նրա առջև, նրա, որ հնօրյա մոգի պես գիտե խոսքի բոլոր գաղտնիքները...»³ և այլն, և այլն:

Այսպես, Էրենբուրգն իր ակնարկում քարը քարի վրա չի թողնում ո՛չ Բալմոնտի պահվածքից ու նկարագրից, ո՛չ էլ ստեղծագործությունից, գտնելով, որ այն գուրկ է վարակող մտերմությունից, վառ է, բայց միաժամանակ խայտաբղետորեն անճաշակ է՝ ռուսական ականջի համար պարզապես տհաճ են ռնգային հնչյունները՝ «влюбленный», «утомленный», «опьяненный», դրա կուտակումները: Չափազանց խիստ է և եզրակացությունը, ըստ որի՝ «Բալմոնտին չեն սիրում և չեն սիրելու», գնահատականներ ու եզրակացություններ, որոնցից շատերը փոփոխված, խմբագրված ու հղկված ենք տեսնում նրա

³ «Слово», 1920, 17 октября.

գրքի համապատասխան հատվածներում: Ակնարկում հանդիպում ենք, օրինակ, այսպիսի կոպիտ տողերի. «Как всякий король, Бальмонт величественен, не лез и трогателен. Он порождает в сердцах преклонение, возмущение и жалость». Գրքում դրան փոխարինում են ահա այս տողերը. «Было в его облике нечто величественное и жалкое, высокомерное и ребячливое»⁴. Սրա կողքին հետաքրքրական է նույն գրքի էջերում տեղ գտած էրենբուրգի ընդհանուր եզրակացությունը, որով, առանց ակնարկելու, այլոց շարքում, նա շտկում է նաև քննվող դիմանկարում արտահայտված վաղեմի անարդար վերաբերմունքը Բալմոնտի հանդեպ: «Այո՛, – գրում է նա, – Բալմոնտը վատ շատ բանաստեղծությունների ունի, նա շատ էր գրում և ամեն ինչ տպագրում էր: Բայց նրա երեսուն գրքից կարելի է կազմել մեկ լավը... Բալմոնտը շատ բան է փոխել ռուսական պոեզիայում. բավական է վերընթերցենք նրա այնպիսի բանաստեղծությունները, ինչպիսիք են՝ «Я изысканность русской медлительной речи...» կամ «Есть в русской природе усталая нежность...».

Բախտը նրա հանդեպ եղել է բացառիկ անարդար. նրանով հիացել են, իսկ հետո վրեժխնդիր եղել այն բանի համար, որ նա հիացրել է»⁵:

Բրյուսովի և Բալմոնտի հիմնականում նեգատիվ դիմանկարներն ստեղծելիս երիտասարդ էրենբուրգն առաջնորդվում էր այդ ժամանակի իր նախասիրություններով և հարկ է, իսկապես, արժանին մատուցել նրա հաստատուն ու անխոցելի ճաշակին: Ռեճե Գիլին հակադրվում է երաժշտականորեն հուզական Վեռլենը, Բալմոնտին հակադրվում են Բլոկն ու Ախմատովան, Սևերյանին՝ Մայակովսկին:

«Ա. Ա. Բլոկ» և «Վ. Վ. Մայակովսկի» – այս դիմանկարներն արդեն նախորդ երկուսի հակապատկերն

⁴ И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2, с. 150.

⁵ Նույն տեղում, էջ 154:

են, և, պետք է ասել, դրանց մեջ արժարժված մտքերը շատ հեռավոր չափով են տեղ գտել Էրենբուրգի գրքում: Բլոկը պարզապես Էրենբուրգի ամենաառաջին նախասիրությունն է ժամանակի ռուսական պոեզիայից, որին նվիրված ակնարկը բառացիորեն ուղղված է երկրպագության հասնող սիրով ու խանդաղատանքով: Հուշագրական մտաբերումներն այստեղ բացակայում են, քանի որ Էրենբուրգը Բլոկին երբեք չէր հանդիպել: «Գեղանի Տիկնոջից» անցնելով «Ձյունե դիմակին», ապա «Անժանոթուհուն» և մյուսներին՝ ամենանրբին երանգներով բնութագրում է բանաստեղծի սիրո, տառապանքի, կարոտի, մտերմության, խորհրդավորության զգացողությունները, բացում նրա լռության ու հոգնության, տազնապների ու սպասման տարողությունը: Եվ այս ամենից հետևող եզրակացությունն այն է, ըստ որի՝ մեծագույն թյուրիմացություն պետք է համարել Բլոկին «կրոնական» բանաստեղծ համարելը: Նա մարդկային քնքշության, կարեկցանքի և սիրո երգիչ ու քարոզիչ է և «կրոնական» է այնքանով, որքանով նրա համար «Աստված դա սերն է»⁶:

Բլոկի դիմանկարում արդեն համեմատվողները ռուսական պոեզիայի դասականներն են, առաջին հերթին Պուշկինը, որի բանաստեղծական պարզության օրինակով և օգնությամբ ցուցադրվում է բլոկյան պարզ ու հասարակ չափատողերի հմայքը: «Բայց ասացեք, — գրում է նա, — ինչո՞ւ մեզ չեն դադարում հուզել հասարակ, համարյա աղքատիկ այս տողերը. «Я помню чудное мгновенье» կամ «Мои владеющие руки тебя пытались удержать»». Երբ կարդում ես Բլոկի բանաստեղծությունները, հաճախ զարմանում ես... Հասարակ բառերի հասարակ միահյուսումով այդ ճշմարիտ մոզը հմայում է, նա, որին հարկավոր չեն ո՛չ արաբական զարդարանքներ, ո՛չ շքեղ թիկնոց, ո՛չ երազային կանաչ...

⁶ «Слово», 1920, 24 октября.

... Նրա բանաստեղծությունները կարդում ենք ոչ թե ամենքի ներկայությամբ, ոչ թե էստրադայից, այլ՝ երեկոյան, փակելով դռները, կարդում ենք ինչպես սիրած էակի նամակներ, նրա անունն արտասանում ենք քաղցր շշուկով: Պուշկինը Ռուսաստանի առաջին սերն էր, նրանից հետո նա սիրել է շատերին: Բայց Բլոկին նա ճանաչեց ահեղ ու ճակատագրական օրերին... ճանաչեց ու սիրեց»:

Էրենբուրգի համար Բլոկը մի տեսակ անձնական թուլություն և միաժամանակ երջանկություն է, որը խոստովանում է ակնարկի հենց սկզբից՝ իր վերաբերմունքն ու պատկերացումները համեմատելով «միամիտ աղջկա տեսիլքի» հետ:

Միանգամայն այլ է վերաբերմունքը Վլ. Մայակովսկու հանդեպ, որի դիմանկարը գծագրվում է ֆուտուրիստական գրական կենցաղի կոլորիտով, բանաստեղծի առնական արտիստիկ կեցվածքի և ստեղծագործության ճկուն ու հետաքրքիր բնութագրումներով:

Եթե կյանքում Էրենբուրգը Բլոկին չէր տեսել, ապա Մայակովսկուն հանդիպել էր, տեսել հենց նրա տարերքի մեջ՝ ֆուտուրիստների սրճարանում, բեմի վրա: Այդտեղից էլ սկսում է նա՝ թանձր շտրիխներով, դիպուկ արտահայտություններով բացելով նրա նկարագրի մեկ այս, մեկ մյուս կողմերը:

Մեկը մյուսից դիպուկ են Մայակովսկու ծայնի, հռետորական ձիրքի, հզոր խոսքի, ուժի և ամրության, նրա ստեղծագործության առնական թափի Էրենբուրգի բնութագրերը: «Մայակովսկին ունի անսովոր ուժի ծայն, — գրում է նա, — և, երբեմն, տարօրինակ է նրան լսելը. թվում է «Սատիրիկոնից» բանաստեղծություններ արտասանող մարգարե: Նա կարողանում է բառերն արտասանել այնպես, որ դրանք ընկնում են ինչպես պարսատիկից արծակված քարեր: Նրա խոսքը մոռումնենտալ է: Նրա ուժը՝ ուժի մեջ

է: Նրա պատկերները՝ թող որ երբեմն էժանագին ու հասարակ, ֆիզիկապես մեծ են սովորականից»⁷:

Էրենբուրգի ստեղծած դիմանկարների առանձնահատկությունն այն է, որ դրանցում ամեն անգամ տվյալ բանաստեղծի մարդկային խառնվածքն ու ստեղծագործության յուրօրինակությունները բնութագրվում են միասնաբար, մեկով բացվում, լրացվում, ցուցադրվում է մյուսը: Նույն ձևով, ասես, աննկատ նա անցնում է շրջապատող մթնոլորտին, միջավայրին, այդ հենքի վրա ավելի ցայտուն դարձնելով այն, ինչ համարում ենք բանաստեղծի ու նրա ստեղծագործության հասարակական հնչեղություն կամ արձագանք: Այս նշված առանձնահատկությունը առավել ցայտուն դրսևորվել է Մայակովսկուն նվիրված ակնարկում:

Ուժի հետ ծուլված շեշտելով բանաստեղծի առողջությունը, որ անմիտ մանիֆեստների և անհեթեթ բանաստեղծությունների մթնոլորտում հորդում է «երիտասարդական կայտառ հովատակի» խանդավառ եռանդով, Էրենբուրգը սրամտորեն նկատում է. «Առողջությունը բանաստեղծական հասարակայնության մեջ ինչ-որ դատապարտելի բան է, և Մայակովսկին այն թաքցնում է՝ դրա համար օգտագործելով Բուրյուկի լոռնետը և Խլեբնիկովի իսկական խելահեղությունը: Միամիտ աղջիկները հավատում և Մայակովսկուն համարում են ջարդված, հիվանդ, տառայալ բանաստեղծ: Բայց տեսեք, թե նա ինչպես է բիլիարդ խաղում, լսեք, թե ինչպես է գոռում չափից ավելի հանը հանած սպեկուլյանտի վրա, կարդացեք «Վարտիքավոր ամպը», մարմնական սիրո այդ փառաբանությունը կամ «Միստերիան»... »:

Կենսահաստատ թափի ու խանդավառության կողքին Մայակովսկու պոեմների առանձնահատկություններից է համարվում դրանց «ծայր աստիճանի դատողական ու տրամաբանական» կառուցված-


⁷ «Слово», 1920, 31 октября.

քը: Երենբուրգը պարզապես նկատում է, որ Մայակովսկու պոեմները «մաթեմատիկական ֆորմուլներ են»: Դրանցում չկան աշխարհի վերջի կամ արևի անդարձ խավարման հաշվումներ կամ գուշակություններ, դրանցում ամեն ինչ պարզ է: Բայց, ավելացնում է հեղինակը, «Մայակովսկին իր պարզությունը չի սիրում, դրանից վախենում է, և չափատողերի ճշգրիտ, սահուն ընթացքը ծանրաբեռնում է գործարաններ և կատաղի հորձանուտներ առաջացնող քարերով...»:

Անդրադառնալով տաղաչափությանը՝ Երենբուրգը գտնում է, որ արտասանական հնարներով, այդ թվում՝ հատած տողերով, Մայակովսկուն չի հաջողվում թաքցնել իր չափատողերի նույնատեսակ կամ նույնահունչ ռիթմիկան: Որքան էլ նա ջանում է դրա բերած միապաղաղությունը ցրել սրամիտ հնչյալնդօրինակումներով, բաղադրյալ հանգերով, դրանից ոչինչ չի փոխվում, այդուհանդերձ՝ «... լսվում են նույն՝ թող որ առաջնակարգ, թմբուկների» ձայներ: Հետաքրքիր է, որ ինչպես տաղաչափական այս, այնպես էլ պոեմների դատողական կառուցվածքային առումով Երենբուրգը հարազատություն է տեսնում Մայակովսկու և Բրյուսովի միջև, պարզապես Մայակովսկուն համարելով՝ «Բրյուսովի բարեփոխված հրատարակություն»:

Տաղաչափական միօրինակության փոխարեն շեշտվում է Մայակովսկու վառ տեսողականությունը, որը նրա ստեղծագործության հզոր թափի, նրա շարժումների նախասկզբնական զորության և այլ հատկությունների ամբողջությամբ՝ որպես երևույթ թարմացնում է «գեղարվեստորեն թորած մթնոլորտը»: Ամենայն որոշակիությամբ՝ Երենբուրգը պաշտպանում է Մայակովսկու բնական կենսահաստատ պոեզիան, «ֆուտուրիզմը» համարելով «զուտ այլանդակ դիմակ» նրա «հանգիստ դեմքին»: Պաշտպանում է և՛ ընդդեմ խորհրդապաշտության, և՛ ֆուտուրիզմի, և պատահական չէ, որ բնավող դիմանկարը վերջավորվում է Մայակովսկու «անողջ, բարձրածայն, ուժեղ,

II
659384
P



կոպիտ» պոեզիայի հակադրությամբ իրեն «սպառնած», «միայն աֆրիկյան ընծուղտներ և իսլանդական աղջիկներ» ճանաչող Ի. Սևերյանինի պոեզիային: Ակնարկվում է Ի. Սևերյանինի ստեղծագործության ապաստոցիալական բնույթը, որին ի հակակշիռ գնահատվում է Մայակովսկու պոեզիայի հասարակական-սոցիալական հզոր ուժն ու հնչեղությունը:

Համադրելով Թիֆլիսում գտնված օրերին տպագրած այս չորս դիմանկարը՝ դժվար չի լինի տեսնել, որ երիտասարդ էրենբուրգին խորթ է եղել ադանդավորական մոտեցումը բանաստեղծական հոսանքների հանդեպ: Նրա գնահատության չափանիշը տադանդն է, տվյալ բանաստեղծի ստեղծագործության հասարակական նշանակությունն ու արվեստի հմայքը, որով ժամանակի բանաստեղծական տիրապետող ուղղություններից առանձնացվել ու գնահատվել են Ա. Բլոկն ու Վլ. Մայակովսկին:

Ա. Բլոկի մասին անդրկովկասյան և, մասնավորապես, հայ մամուլում ու գրաքննադատության մեջ գրվել էր բազմիցս: Լայն արծագանքի էր արժանացել հատկապես «Տասներկուսը»⁸. այդ արծագանքներով, Բոյուսովի «Հայաստանի պոեզիայում» գետեղված թարգմանություններով Բլոկը ճանաչված ու գնահատված մեծություն էր նաև հայ գրական շրջաններում: Ռուս ֆուտուրիստ երեքի Դ. Բուրլյուկ, Վլ. Մայակովսկի, Վ. Կամենսկի, 1914 թ. մարտին Անդրկովկաս կատարած այցելությունից հետո⁹ ժամանակ առ ժամանակ Թիֆլիսի գրական միջավայ-

⁸ Մասնավորապես, տես С. Городецки й. Двенадцать. — «Кавказское слово» (Тифлис), 1918, 10 августа; Ս ու Ր ի ս ա թ յ ա ն. Ալ. Բլոկի «Տասներկուսը» և ռուսական տարերային շարժումը. — «Մշակ» (Թիֆլիս), 1919, 5-6 մարտի:

⁹ Այդ մասին մանրամասն տես Ա ն. Ջ ա ք ա ղ յ ա ն. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920), էջ 10-16:

րուն հնչել է և Մայակովսկու անունը, իսկ 1918 թ. հուլիսի 20-ին կազմակերպվել է նրա ստեղծագործությունների երեկոն (զեկուցողներ՝ Յու. Դեզեն և Բ. Կորնեն)¹⁰: Նկատենք, սակայն, որ 1917–1920 թթ. ռուս ֆուտուրիստներից Անդրկովկասում ամենից ավելի մասսայականություն են վայելել Վ. Կամենսկին և Ի. Սևերյանինը¹¹:

Որքան հաջողվեց պարզել, Ի. Էրենբուրգի՝ Մայակովսկու այս դիմանկարը բանաստեղծի անձին և ստեղծագործությանը նվիրված եթե ոչ ամենաառաջին, ապա առաջին ծավալուն, ըստ ամենայնի, հանգամանալից խոսքերից է անդրկովկասյան իրականության մեջ: Անկասկած է, որ որպես Սովետական Ռուսաստանից Թիֆլիս հասած նորություն՝ այն անպայման պետք է որ լայն արձագանք գտած լինի արվեստի և գրականության երիտասարդ սերնդի միջավայրում: Այս առումով, երբեք չթերագնահատելով նախորդ դիմանկարների գրապատմական արժեքը, հարկ է ասել, որ հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, մասնավորապես, Մայակովսկու դիմանկարը, որքանով հենց 1921–1922 թթ. սկսած որոշակի է ինչպես վրաց բանաստեղծներ Պ. Յաշվիլու, Տ. Տաբիձեի և մյուսների, այնպես էլ հայ մեծ բանաստեղծ Ե. Չարենցի բացահայտ կողմնորոշումը նրա ստեղծագործության հանդեպ:

* * *

«Հավելվածում» զետեղել ենք «Սլովո» թերթի 1920 թ. սեպտեմբեր – հոկտեմբերի համարներում Ի. Էրենբուրգի տպագրած ակնարկները Վ. Բոյուսովի, Կ. Բալմոնտի, Ա. Բլոկի և Վլ. Մայակովսկու մասին:

¹⁰ «Кавказское слово», 1918, 20 июля.

¹¹ Տե՛ս մեր «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920)» գրքում:

1. ИЛЬЯ ЭРЕНБУРГ В ТИФЛИСЕ

Выдающийся русский писатель и публицист Илья Эренбург, по стечению определенных обстоятельств, вместе с супругой лишается возможности вернуться из Феодосии в Москву и в конце сентября 1920 г. оказывается в Тифлисе. В незнакомом городе в первый же день своего пребывания, он встречается с поэтом Осипом Мандельштамом. Дням, проведенным с Мандельштамом, грузинскими поэтами Паоло Яшвили и Тицианом Табидзе, Эренбург посвятил интересные страницы в своей мемуарно-автобиографической книге «Люди, годы, жизнь». «Когда очевидцы молчат, рождаются легенды»¹, — эти мудрые слова писателя можно воспринять как эпиграф этой книги.

И. Эренбург пишет, что случайная встреча обрадовала и его, и Мандельштама, который в Тифлисе «чувствовал под ногами почву и деловито сказал: «Сейчас мы пойдем к Тициану Табидзе, и он нас поведет в замечательный духан...»². Т. Табидзе встречает их восторженно, затем вместе с П. Яшвили угощает поэтов-гостей, устраивает в гостиницу. «Мы прожили в Тбилиси две недели; они показались мне лирическим отступлением...

¹ И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2. М., 1961, с. 7.

² Там же, с. 508.

Никогда дотоле я не бывал на Востоке, и старый Тбилиси мне показался городом из «Тысячи и одной ночи». Мы бродили по нескончаемому Майдану; ... побывали в серных банях; ... попили вино в Верийских садах; ... В древних храмах мы глядели на каменных цариц, к которым ласкались барсы. ...». «Мне подарили «Сборник тифлисского цеха поэтов» (под названием «Акмэ». — Ан. З.), — вспоминает Эренбург. — Эта книжка случайно у меня сохранилась. Среди авторов много поэтесс с поэтичными фамилиями: Нина Грацианская, Бел-Конь-Любомирская, Магдалина Де-Капрелевич. Поэты «тифлисского цеха» писали сонеты о Свароге, Эросе, Суламите, Санаваллате, Монфоре и о других, столь же близких персонажах»³.

Завершая свой рассказ о днях, проведенных в Тифлисе, Эренбург пишет: «...осенью 1920 года... грузинские друзья приютили, пригрели нас. ...Яшвили и Табидзе проводили нас по Военно-Грузинской дороге до первого привала»⁴, однако ни вечер, организованный в честь их приезда, ни интересные статьи о современных русских поэтах, опубликованные Эренбургом в тифлисской печати, не нашли отражение в его книге «Люди, годы, жизнь».

Этот «единственный» литературный вечер должен был состояться 26 сентября в зале кон-

³ Там же, с. 511–513. Об этой книжке подробнее см.: Ан. Закарян. Деятельность тифлисского «Цеха поэтов». — «Историко-филологический журнал», 2011, № 2, с. 113–130; он же. Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акмэ». Ереван, 2011, с. 20–98.

⁴ И. Эренбург. Указ. раб., с. 516–517.

серватории. Со вступительным словом «Современная русская поэзия» вечер должен был открыть обладающий большой эрудицией и ораторским даром известный грузинский литературный деятель Г. Робакидзе. «Искусство и новая эра» — такой была тема доклада И. Эренбурга, который должен был также прочесть стихи из книг «Огонь», «Новые зори», Мандельштам — стихи из своей книги «Камень». Затем со стихами последних должен был выступить русский актер Н. Н. Ходотов⁵, долгое время нашедший убежище в Тифлисе и который, по словам Эренбурга, «собирался домой, в Петроград»⁶.

К сожалению, нам не удалось найти откликов на этот литературный вечер⁷. В результате поис-

⁵ «Приезд поэтов О. Мандельштама и И. Эренбурга. В Тифлис из Крыма приехали поэты О. Мандельштам и И. Эренбург. В воскресенье в консерватории их единственный вечер. Програма: 1) Гр. Робакидзе — Слово о современной русской поэзии, 2) И. Эренбург — доклад «Искусство и новая эра» и стихи из книг «Огонь» и «Новые зори», 3) О. Мандельштам — стихи из книги «Камень» и новые стихи, 4) Н. Н. Ходотов — стихи О. Мандельштама и И. Эренбурга. Вечер представляет большой литературный интерес» [«Слово» (Тифлис), 1920, 24 сентября]. Кстати, в объявлении газеты «Слово» от 26 сентября заглавие книги И. Эренбурга «Новые зори» напечатано — «Две Зори».

⁶ См.: И. Эренбург. Указ. раб., с. 512.

⁷ Обычно информация о состоявшихся мероприятиях публиковалась в последующем номере газеты «Слово». А следующий номер этой газеты вышел в свет 28 сентября. К сожалению, в хранящейся в Национальной библиотеке Армении единственной подшивке газеты «Слово» 2-я и 3-я страницы этого но-

ков были обнаружены выступления И. Эренбурга в печати, которые, несомненно, представляют историко-литературный интерес. Это очерки о В. Брюсове, К. Бальмонте, А. Блоке, Вл. Маяковском, опубликованные в тифлисской газете «Слово». 26 сентября газета сообщала, что начинает публикацию статей, посвященных портретам русских поэтов, которые «написал ныне гостящий у нас поэт И. Эренбург». Но больше такие портреты не публиковались, так как Эренбург выехал из Тифлиса⁸.

Известно, что эти очерки в ряде других статей о русских писателях (об Анне Ахматовой, Юргисе Балтрушайтисе, Андрее Белом, Максимилиане Волошине, Сергее Есенине, Вячеславе Иванове, Осипе Мандельштаме, Борисе Пастернаке, Федоре Сологубе, Марине Цветаевой) с дополнениями, сокращениями и в переработанном виде нашли место в книге И. Эренбурга «Портреты русских поэтов», изданной в Берлине в 1922 г. Затем она под названием «Портреты современных поэтов» вышла в 1923 г. в московском издательстве «Первина». Книга долгое вре-

мера, где и должна была быть помещена соответствующая информация об этом вечере — типографский брак — листы остались пустыми.

⁸ О деятельности Эренбурга в Тифлисе см.: Ан. Закарян. Илья Эренбург в Тифлисе (1920 г.). — VII республиканская сессия молодых научных сотрудников и аспирантов. Тезисы докладов. Ереван: Институт литературы им. М. Абегамяна АН АрмССР, 1984, с. 15—16 (на арм. яз.); он же. Русские писатели в Закавказье и армянская литературная жизнь (1914—1920). Ереван, 1984, с. 205—214 (на арм. яз.); он же. Статьи Эренбурга о русских поэтах. — «Литературная Армения», 1989, № 8, с. 99—101.

мя не переиздавалась и лишь в 1999 г. была издана в Санкт-Петербурге журналом «Нева» тиражом 500 экземпляров⁹.

Здесь мы не будем проводить текстологический анализ очерков о рассматриваемых поэтах, написанных в 1920 г. в Тифлисе и затем переизданных в 1922, 1923, 1999 годах, а лишь проведем некоторые параллели с оценками и характеристиками, данными Эренбургом В. Брюсову, К. Бальмонту, А. Блоку и Вл. Маяковскому в книге «Люди, годы, жизнь».

⁹ См.: И. Эренбург. Портреты современных поэтов. СПб., журнал «Нева», 1999 г. // <http://magazines.russ.ru>.

2. ПОРТРЕТЫ РУССКИХ ПОЭТОВ

Из упомянутых выше очерков первые два содержат почти те же характеристики, которые мы находим в книге «Люди, годы, жизнь». Чувствуется, что Эренбург имел под рукой очерки, опубликованные в 1920-е годы. И тем не менее очерки, посвященные и Брюсову, и Бальмонту¹ (особенно последнему), написаны более остро и даже имеют сатирический акцент, значительно смягченный на страницах книги, написанной десятилетия спустя. Отточены формулировки, но оценки в основном остались те же. Поэтому мы не будем проводить параллели между ними.

«А. А. Блок» и «В. В. Маяковский» — эти портреты по внутреннему настрою противопоставлены первым двум, и нужно отметить, что мысли, высказанные здесь, очень отдаленно отразились в книге Эренбурга. В современной русской поэзии более всех Эренбург отдавал предпочтение Блоку. В его очерке, посвященном поэту, нет штрихов, связанных с воспоминаниями, поскольку Эренбург не встречался с Блоком. Переходя от «Прекрасной Дамы» к «Снежной маске», а затем к «Незнакомке» и другим произведениям, Эренбург тонко описывает чувства любви, страданий, тоски, ощущения беспредельной усталости, тревожные ожидания поэта. Эренбург считает нелепым утверждения о Блоке

¹ «Слово», 1920, 26 сентября; 17 октября.

как о «религиозном» поэте. Он певец и проповедник человеческой нежности, сострадания, любви и «религиозен» лишь постольку, поскольку для него «богом является любовь»².

Проводимые в портрете Блока параллели связаны с именами классиков русской поэзии, в первую очередь с Пушкиным, на примере поэтической стихии которого выявляется непреходящее значение ясного и простого стихосложения Блока. Скажите пожалуйста, пишет он, «... почему нас не перестанут волновать простые почти убогие строки»: «Я помню чудное мгновение» или «Мои хладеющие руки тебя пытались удержать»? Когда читаешь стихи Блока, порой дивишься... Простым сочетанием простых слов ворожит он, истинный маг, которому не нужно ни арабских выкладок, ни пышной мантии, ни сонных трав... Его стихи читаем не при всех, не на эстраде, а вечером, прикрыв двери, как письма возлюбленной, имя его произносим сладким шепотом. Пушкин был первой любовью России, после него она многих любила. Но Блока она узнала в страшные и роковые дни ..., узнала и полюбила»³.

Блок для Эренбурга был своеобразной слабостью, одновременно и олицетворением счастья, о чем признается в начале очерка, сравнивая свои представления с «видением наивной девочки».

